ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
Վարդենիս Հ. Անդրեասյան 4
Հեռ.՝ (0269)22031, Էլ. փոստ.՝
vardenismer@mail.ru

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի վարչական շենքում սույն թվականի մայիսի 10-ին անցկացվեց հանրային քննարկում՝ Նորակերտ բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ փողոցներն Արցախյան Առաջին և 44 օրյա պատերազմներում զոհված զինծառայողներ՝ Սամո Ղազարյանի, Լեոնիկ Ղազարյանի,Կամո Օհանյանի, Սերյան Սարոյանի և Արշակ Սարգսյանի անվամբ անվանակոչելու նպատակով:

Հանրային քննարկմանը մասնակցում էին զոհված զինծառայողների ընտանիքի անդամները, բնակավայրի բնակիչներ, Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի՝ զարգացման ծրագրերի, գնումների, առևտրի, սպասարկման, տուրիզմի և գովազդի բաժնի առաջատար մասնագետ Ռուզան Զաքարյանը, քաղաքշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի առաջատար մասնագետներ, Եղիշե Զարոյանը և Արսեն Խչեյանը:

Նորակերտ բնակավայրի վարչական ղեկավար Գերասիմ Սարգսյանը նշեց, որ Վարդենիս համանքի Նորակերտ բնակավայրը նախատեսել է Նորակերտ բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ փողոցներն անվանակոչել Արցախյան Առաջին և 44 օրյա պատերազմներում զոհված զինծառայողներ՝ Սամո Ղազարյանի, Լեոնիկ Ղազարյանի, Սերյան Սարոյանի և Արշակ Սարգսյանի անվամբ՝ հիմք ընդունելով զինծառայողների ծնողների կամ հարազատների գրավոր դիմումները:

Գնումների, զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, տուրիզմի և զովազդի բաժնի առաջատար մասնագետ Ռուզան Զաքարյանը նշեց, որ հանրային քննարկում անցկացվում է՝ հիմք ընդունելով «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ կետը, համաձայն, որի համայնքի որևէ փողոց զոհված զինծառայողի անվամբ անվանակոչելու գործընթացը, եթե վերջինիս զոհվելուց չի անցել 5 տարի, հնարավոր է իրականացնել տվյալ փողոցի բնակիչների շրջանում հանրային քննարկման արդյունքում համաձայնություն ստանալով համանքի ավագանու հաստատմամբ:

Բնակավայրի վարչական ղեկավար Գ. Սարգսյանը ներկայացրեց բնակիչների կողմից գրված յուրաքանչյուր դիմումների բովանդակությունը և առաջարկեց.

- Նորակերտ բնակավայրի 1-ին փողոցն անվանակոչել 44 օրյա պատերազմում զոհված զինծառայող Սամո Ղազարյանի անունով:
- Նորակերտ բնակավայրի 2-րդ փողոցը անվանակոչել՝ Արցախյան պատերազմում զոհված զինծառայող Լեոնիկ Ղազարյանի անունով:
- Նորակերտ բնակավայրի 3-րդ փողոցն անվանակոչել Արցախյան պատերազմում զոհված զինծառայող Արշակ Սարգսյանի անունով,
- Նորակերտ բնակավայրի 4-րդ փողոցն անվանակոչել Արցախյան պատերազմում զոհված զինծառայող Կամո Հովհանյանի անունով:
- 5-րդ փողոցն անվանակոչել Արցախյան պատերազմում զոհված Սերյան Սարոյանի անվամբ:

Ելույթ ունեցան բնակավայրի բնակիչներ, ովքեր ողջունեցին նախաձեռնությունը: Բնակիչների կողմից առարկություն չի հնչել:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները բնակիչները որոշեցին համաձայնություն տալ առաջարկվող նախագծին:

Համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից որոշվեց փողոցների հասցեափոխման համար նախատեսված ամբողջական փաթեթը ներկայացնել առաջիկա ավագանու նիստին:

Արձանագրեց՝ Ռ. Զաքարյան

Հաստատեց՝ Վարդենիս համայնքի ղեկավար
Ա.Խաչատրյան